



ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հ Ր Ա Մ Ա Ն

№ 86540 .10. 05 2016թ

ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԴԱՍԸՆԹԱՑՆԵՐԻ ՌԻՍՈՒՑԱՆՈՒՄԸ ԵՎ ԳԻՏԵԼԻՔՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՈՒՄՆ ԱՌՑԱՆՑ ԵՂԱՆԱԿՈՎ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՐԳԻ ՄԱՍԻՆ

Երևանի պետական համալսարանի 2016-2020թթ. զարգացման ռազմավարական ծրագրի «Որակյալ կրթություն» նպատակի 1.4. խնդրի պահանջներն արդյունավետ իրականացնելու նպատակով, մինչև 2016-2017թթ. ուսումնական տարվա կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգում համապատասխան փոփոխության կատարումը.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ Ե Մ

1. Երևանի պետական համալսարանում առարկայական դասընթացների ուսուցանումը և գիտելիքների գնահատումը թույլատրել իրականացնելու առցանց եղանակով:

2. Սահմանել, որ.

ա) Առցանց եղանակով անցկացվող դասընթացի կառուցվածքն ու բովանդակությունն ապահովում է կրթական ծրագրով նախատեսված կրթական վերջնարդյունքները:

բ) Առցանց եղանակով դասընթացի ուսուցանումը և գիտելիքների գնահատումն անցկացվում է «Կրեդիտային համակարգով առկա ուսուցմամբ ուսումնական գործընթացի կազմակերպման կարգի» 6-րդ կետի համապատասխան ենթակետերի և տվյալ կրթական մոդուլի կրթական վերջնարդյունքների գնահատման մեթոդաբանության համաձայն:

գ) Առցանց եղանակով անցկացվող դասընթացը վարող դասախոսը պատասխանատու է դրա հստակ և անթերի կատարման համար:

դ) Առցանց եղանակով դասընթացի ուսուցանման և գիտելիքների գնահատման տեխնիկական ապահովումն (առցանց դասընթացի համակարգում ուսանողների գրանցումը, էլեկտրոնային փոստով ուսանողներին տեխնիկական աջակցության տրամադրումը, գիտելիքների ստուգման առցանց համակարգի անվտանգության ապահովումը) իրականացնում է Երևանի պետական համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնը:

ե) Առցանց եղանակով անցկացվող դասընթացը սպասարկող ամբիոնի վարիչը դասընթացի հետ կապված կազմակերպչական հարցերը (ուսանողների թվաքանակը, դասընթացը վարող դասախոսների անվանացանկը) համաձայնեցնում է Երևանի պետական համալսարանի տեղեկատվական տեխնոլոգիաների կրթական և հետազոտական կենտրոնի պատասխանատու մասնագետի հետ:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ՝

Ա. Հ. ՄԻՄՈՆՅԱՆ